ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27 սեպտեմբերի 2012թ. թիվ 452

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ «ԲԵՐՔԻ ՏՈՆ - 2012» ՄԻՋՈՑԱՌՈՒՄ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.19 կետի «ա» ենթակետով՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. 2012թ. հոկտեմբերի 7-ին Լոռու մարզի Գյուլագարակ գյուղի մերձակա «Հեքիաթ» հանգստյան գոտում անցկացնել Լոռու մարզային «Բերքի տոն - 2012» միջոցառումը:

2. Հաստատել Լոռու մարզային «Բերքի տոն - 2012» միջոցառման ծրագիրը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

3. Լոռու մարզային «Բերքի տոն - 2012» միջոցառման նախապատրաստման և անցկացման համար ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Լոռու մարզպետի տեղակալ Ա.Դարբինյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. սեպտեմբերի 27
ք.Վանաձոր